

<p>Hotels, Lodging, and Short-Term Rentals FAQs</p>	<p>Հյուրանոցների, կացարանների և կարճատև վարձակալությունների վերաբերյալ Հաճախ տրվող հարցեր</p>
<p>What are hotels and short-term rentals doing to slow the spread of COVID-19?</p>	<p>Ի՞նչ են անում հյուրանոցները և կարճատև վարձակալություններով զբաղվողները՝ դանդաղեցնելու COVID-19-ի տարածումը:</p>
<p>Hotels and short-term rentals are required to ensure that guests and staff follow all public health protocols, including practicing physical distancing, wearing cloth face coverings and following infection control practices.</p>	<p>Հյուրանոցներով և կարճատև վարձակալություններով զբաղվողներից պահանջվում է ապահովել, որ հյուրերը և անձնակազմը հետևեն հանրային առողջապահական կանոններին՝ ներառյալ ֆիզիկական հեռավորություն պահելը, կտորե դիմակներ կրելը, և վարակի վերահսկման պրակտիկային հետևելը:</p>
<p>What are the disinfecting protocols that need to be followed?</p>	<p>Որո՞նք են ախտահանման կանոնները, որոնց պետք է հետևել:</p>
<p>Rooms, including surfaces, electronics and soft furniture, must be cleaned thoroughly after each stay using approved Environmental Protection Agency (EPA) disinfectants and techniques.</p>	<p>Սենյակները՝ ներառյալ մակերեսները, էլեկտրոնիկան և փափուկ կահույքը, պետք է յուրաքանչյուր օգտագործումից հետո մանրակրկիտ մաքրվեն Շրջակա միջավայրի գործակալության (EPA) կողմից արտոնված ախտահանիչներով և տեխնիկական միջոցներով:</p>
<p>Are towels and all bedding cleaned between each guest?</p>	<p>Սրբիչները և անկողնու ողջ սպիտակեղենը մաքրվո՞ւմ է յուրաքանչյուր հյուրից հետո:</p>
<p>Yes, all linens must be removed after each stay and cleaned in accordance with the Centers for Disease Control and Prevention (CDC) guidelines.</p>	<p>Այո, ողջ սպիտակեղենը պետք է հեռացվի յուրաքանչյուր օգտագործումից հետո և մաքրվի համաձայն Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) ուղեցույցերի:</p>
<p>How often are housekeeping, room delivery and maintenance staff screened for symptoms?</p>	<p>Որքա՞ն հաճախ են մաքրուհիները, սենյակային ծառայություն և սպասարկում իրականացնող անձնակազմը վերահսկվում՝ ախտանիշների առումով:</p>
<p>Daily, before the start of their shift. Anyone feeling sick or showing symptoms must stay home.</p>	<p>Ամեն օր՝ նախքան իրենց հերթափոխի սկիզբը: Յուրաքանչյուրը, ով վատառողջ է կամ ախտանիշներ ունի, պետք է մնա տանը:</p>

Should hotel staff wear face coverings?	Պե՞տք է հյուրանոցի անձնակազմը դիմակ կրի:
All staff must be provided face coverings and wear them. In addition, they should use additional protective equipment, such as gloves, when necessary.	Ողջ անձնակազմին դիմակներ պետք է հաստկացվեն, որպեսզի դրանք կրեն ամբողջ ընթացքում : Ավելին, նրանք պետք է անհրաժեշտության դեպքում հավելյալ պաշտպանիչ պարագաներ օգտագործեն՝ օրինակ ձեռնոցներ:
Should guests wear face coverings?	Պե՞տք է հյուրերը դիմակ կրեն:
Yes, hotel guests should wear face coverings when outside of their rooms in addition to maintaining at least six feet of physical distance.	Այո, հյուրանոցի հյուրերն ի հավելումն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելուն՝ պետք է նաև դիմակ կրեն, իրենց սենյակներից դուրս գտնված ժամանակ:
Are rooms cleaned daily or only at the end of a guest stay?	Սենյակներն ամե՞ն օր են մաքրվում, թե միայն հյուրի գնալուց հետո:
It is up to each hotel/rental property to determine a cleaning schedule. Most hotels offer daily room cleaning.	Մաքրման գրաֆիկի սահմանումը յուրաքանչյուր հյուրանոցի/վարձակալվող տարածքի որոշումն է: Հյուրանոցների մեծ մասը սենյակների ամենօրյա մաքրում է առաջարկում:
Will the mini bar be available in my room?	Ի՞նչ սենյակում հասանելի կլինի՞ մինի-բար:
No.	Ոչ:
Will there be an in-room coffee maker available?	Սենյակում կլինի՞ սուրճ պատրաստող սարք:
Single-serve coffee makers may be provided with disposable cups, instead of glassware, coffee cups or multi-cup makers.	Մեկ բաժակ սուրճ պատրաստող սարքեր կտրամադրվեն մեկանգամյա օգտագործման բաժակների հետ՝ ապակե սուրճի բաժակների, կամ մի քանի բաժակ սուրճ պատրաստող մեքենաների փոխարեն:
Will ice machines be available?	Մառույց պատրաստելու սարքեր հասանելի կլինե՞ն:
No.	Ոչ:
Are guest laundry / dry cleaning services available?	Հյուրերի համար լվացքատան / չոր մաքրման ծառայությունները հասանելի կլինե՞ն:

Yes, pick-up and delivery should be done with contactless measures in place.	Այո, դրանք վերցնելը և վերադարձնելը պետք է կատարվի անհայում միջոցով:
Will in-room information on the facility be available?	Հաստատության սենյակներում տեղեկատվական նյութեր կլինե՞ն:
Yes, single use information guides may be made available to guests, but shared items you may have seen before, such as menus, will be removed from rooms.	Այո, մեկանգամյա օգտագործման տեղեկատուներ կարող են հասանելի լինել հյուրերին, բայց համաօգտագործման պարագաները, որոնք հնարավոր է նախկինում տեսած լինեք, ինչպես, օրինակ՝ մենյուները, կհեռացվեն սենյակից:
How are hotel elevators managed to accommodate physical distancing?	Ինչպե՞ս պետք է հյուրանոցի վերելակներում ապահովեն ֆիզիկական հեռավորության պահպանումը:
Elevator capacity is limited to 4 individuals or a family at a time for any elevator that does not allow for 6-foot physical distance between riders. All riders are required to wear cloth face coverings.	Ուղևորների միջև 6 ոտնաչափ ֆիզիկական տարածություն չսպաստվող ցանկացած վերելակի տարողությունը սահմանափակվում է միաժամանակ 4 անհատով կամ մեկ ընտանիքով: Բոլոր ուղևորները պետք է կրեն կտորե դիմակներ:
Are hotel bars open?	Հյուրանոցների բարերը բաց են:
Bars that serve food are able to open as long as physical distancing measures are in place.	Սնունդ վաճառող բարերը կարող են բաց լինել, եթե պահպանում են ֆիզիկական հեռավորության կանոնները:
Are hotel fitness centers open?	Հյուրանոցների ֆիթնես կենտրոնները բաց են:
Fitness centers are allowed to open, but check with each property to determine if they have opened their fitness center.	Ֆիթնես կենտրոնները թույլատրվում է բացել, բայց ճշտեք յուրաքանչյուր հաստատությունից՝ պարզելու, եթե բացել են իրենց ֆիթնես կենտրոնը:
Are hotel business centers open?	Հյուրանոցների բիզնես կենտրոնները բաց են:
No, hotel business centers are not open.	Ոչ, հյուրանոցների բիզնես կենտրոնները բաց չեն:
Is the spa open?	Սպա ծառայությունները բաց են:
No.	Ոչ:
Can I book an event (conference, wedding, meeting space)?	Կարո՞ղ եմ նախապես պատվիրել միջոցառում (կոնֆերանս, հարսանիք, ժողովների տարածք):

No, gatherings are not permitted.	Ոչ, հավաքույթներն արգելված են:
Are there special ventilation procedures?	Կա՞ն արդյոք օդափոխության հատուկ կանոններ:
Facilities should consider installing portable high-efficiency air cleaners, upgrading the building’s air filters to the highest efficiency possible, and making other modifications to increase the quantity of outside air and ventilation in all offices, guest rooms and other spaces.	Հաստատությունները պետք է մտածեն շարժական, բարձր արդյունավետության օդափոխիչներ տեղադրելու, շենքերի օդի ֆիլտրերը ամենից արդյունավետ տարբերակներով նորացնելու և այլ փոփոխություններ կատարելու մասին, ինչը բոլոր օֆիսներում, հյուրասենյակներում և այլ տարածքներում կավելացնի դրսի օդի քանակությունը:
Are valet services operational / recommended?	Խորհուրդ տրվո՞ւմ է ավտոմեքենաների սպասարկում կատարելու:
They may operate, but it is up to each hotel to determine if they are offering the service. If they are, physical distancing, face covering and hand washing guidelines should be followed.	Դրանք կարող են գործել, բայց յուրաքանչյուր հյուրանոց ինքն է որոշում, առաջարկել այդ ծառայությունը, թե՛ ոչ: Եթե դրանք գործում են, պետք է հետևել ֆիզիկական հեռավորություն պահպանելու, դիմակ կրելու և ձեռքի լվացման ուղեցույցներին:
Should I allow the hotel staff to store or handle my luggage?	Կարո՞ղ եմ հյուրանոցի աշխատակազմին թույլ տալ դիպչել իմ ուղեբեռին:
You may. It is recommended staff wear face coverings and gloves. Where possible, baggage deliveries are to be placed in the room by the guest.	Այո, կարող եք: Խորհուրդ է տրվում, որ աշխատակազմը կրի կտորե դիմակներ և ձեռնոցներ: Որտեղ հնարավոր է, ուղեբեռը պետք է սենյակ տարվի հյուրի կողմից:
<u>Short-Term Rentals Unit FAQs</u>	<u>Հաճախ տրվող հարցեր կարճատև վարձակալության տների վերաբերյալ</u>
Can I use my time-share?	Կարո՞ղ եմ օգտվել իմ թայմ-շեյրից:
Yes, with members of your own household.	Այո, Ձեր սեփական տան անդամների հետ:
Can I book a VRBO / Airbnb?	Կարո՞ղ եմ նախապես պատվիրել VRBO / Airbnb:
Yes, with members of your own household.	Այո, Ձեր սեփական տան անդամների հետ:
What kind of enhanced cleaning practices are required?	Կատարելագործված մաքրման ի՞նչ գործողություններ են պահանջվում:

<p>Enhanced cleaning of all high-touch areas, kitchens, pantries and linens are required. Rental units should also be equipped with additional hand soap, paper towels, toilet paper, disinfecting spray or wipes, and hand sanitizer. All leftover pantry items should be removed after each guest. Extra linens should not be stored in units and should be offered only on request. Pots and pans and other kitchen items that remain on the property after each guest must be cleaned between each guests' stay. Property owners should also ensure that HVAC and air filters are replaced regularly.</p>	<p>Պահանջվում է ուժեղացված մաքրում բոլոր շատ շփում ունեցող տարածքների, խոհանոցների, մթերանոցների և սպիտակեղենի: Վարձակալությանը տրվող տարածքները պետք է նաև ունենան օճառի, թղթե անձեռոցիկների, զուգարանի թղթի, ախտահանիչ սփրեյների և ձեռքի ախտահանիչ նյութերի լրացուցիչ պաշար: Մթերանոցում թողած բոլոր իրերը յուրաքանչյուր հյուրից հետո պետք է դնել նետվել: Լրացուցիչ սպիտակեղեն չպետք է պահվի սենյակներում, դրանք պետք է տրամադրվեն ըստ պահանջի: Կաթսաները, թավաները և խոհանոցային այլ պարագաները, որոնք մնում են կեցավայրում յուրաքանչյուր հյուրից հետո, պետք է մաքրվեն յուրաքանչյուր հյուրի բնակեցումից առաջ և հետո: Սեփականատերերը պետք է կանոնավոր կերպով փոխեն HVAC-ի (տաքացման և հովացման համակարգ) և օդի ֆիլտրերը:</p>
<p>Is it safe to use kitchen items at a short-term rental?</p>	<p>Ապահով է արդյոք օգտվել խոհանոցային պարագաներից՝ կարճատև վարձակալության կեցավայրերում:</p>
<p>Yes, property owners are required to clean all kitchen items between each guest stay - including all items left in cabinets. Also, all appliances, kitchen areas including refrigerator shelving, oven stovetop, coffee-makers, toasters must be cleaned after each guest. Owners should consider using one-time use dinnerware and utensils when possible.</p>	<p>Այո, սեփականատերերից պահանջվում է մաքրել բոլոր խոհանոցային պարագաները յուրաքանչյուր հյուրի բնակեցումից առաջ և հետո՝ ներառյալ պահարաններում թողած բոլոր իրերը: Բացի այդ, բոլոր սարքավորումները, խոհանոցային տարածքները, սառնարանների պահոցները, ջեռոցի սպիկները, սուրճ պատրաստող մեքենաները, տոստերները պետք է մաքրվեն յուրաքանչյուր հյուրից հետո: Սեփականատերերը պետք է մտածեն հնարավորության սահմաններում մեկանգամյա օգտագործման ճաշի պարագաներ և սեղանի սպասք օգտագործելու մասին:</p>
<p>Are there extra precautions needed for bathroom cleanings?</p>	<p>Կա՞ն արդյոք սանհանգույցի մաքրման լրացուցիչ նախազգուշական միջոցներ, որոնք անհրաժեշտ է կիրառել:</p>

<p>Bathrooms need to be cleaned with a multi-surface cleaner approved for use against COVID-19 by the EPA. Bathroom floors must also be vacuumed and mopped.</p>	<p>Սանհանգույցները պետք է մաքրվեն EPA-ի կողմից COVID-19-ի համար արտոնված ունիվերսալ ախտահանիչ նյութերով: Սանհանգույցի հատակը պետք մաքրվի փոշեկուլով և հատակի շորով:</p>
###	###